

Ապրեսյան Մարգարիտա, Աննա Այվազյան
Երևանի պետական համալսարան

Պաշտպանական խոսքի առանձնահատկությունները
դատական խոսույթում

On some strategies of courtroom defense

ABSTRACT

The paper discusses some strategies of courtroom defense focusing on the unique arsenal of linguistic and psychological tools that the counsel for defense should possess to influence audience and achieve justice.

Լեզվի և իրավունքի փոխկապակցվածությունը ավանդաբար ուսումնասիրության ընդհանուր ոլորտ է հանդիսանում ոչ միայն լեզվաբանների, այնպես էլ իրավագետների համար: Պատահական չէ, որ իրավական լեզվի ամերիկացի հայտնի գիտնականներից Բ. Գարները իրավագիտությունը բնութագրում է, որպես «գրական» մասնագիտություն (literary profession) /8:1/: Իրավաբանական ոլորտի բազմակողմանի ուսումնասիրությունների գերազնահատումը ներկա ժամանակներում դժվար է, քանի որ գլոբալիզացման գործընթացներն ու իրավական ներդաշնակեցումը Եվրոպական Միությունում և ամբողջ աշխարհում, ընդլայնվող միջազգային համագործակցությունը, անասելիորեն սուր են դնում միջլեզվական հաղորդակցության խնդիրները լեզվական ոլորտում: Մասնավորապես աճում է նաև ուշադրությունը դատական խոսքի նկատմամբ /7/:

Դատական խոսքի հետազոտմանը նվիրված են մեծ քանակությամբ աշխատություններ: Սկսած 19-րդ դարի վերջից գիտնականները ուշադրություն են դարձնում ոչ միայն ընդհանուր ճարտասանության, այլ նաև դատական ճարտասանությանը /3/: Այդ ժամանակ վերահրատարակվում են 19-րդ դարի վերջի հեղինակների աշխատությունները (Պ.Սերգեիչ, Լ.Ե.Վլադիմիրովայի և ուրիշների) /3:257; 9:320/, որոս հայտնի իրավաբանների ճառերի հավաքածուներ և

քրեստոմատիաներ, ուսումնական ձեռնարկներ ուսանողների համար, մենագրություններ, գիտական հոդվածներ՝ նվիրված ճարտասանության դասավանդման խնդիրներին, հատկապես իրավունքի լեզվում:

Դատական խոսույթի վերլուծությունը լեզվաբանության մեջ հաստատված հասկացությունների տեսակետից թույլ է տալիս նկարագրել այն որպես կառուցվածքային և կանոնակարգվածության բարձր մակարդակով առանձնացող բազմազանությամբ:

Դատական խոսույթը բնութագրվում է իբրև միջքննախոսական, որը բացի բուն իրավականից ներառում է նաև գիտական հաղորդակցության գծեր: Դատավորների և իրավաբանների գործունեությունը կարելի է բնութագրել նաև իրավաստեղծագործական գործողություն, որը իրականացվում է գաղափարատրամաբանական մտածողության ձևով /6:210/:

Ընկալելով դատական խոսույթը իբրև բանավոր միջնորդավորված գործունեություն հատուկ բնագավառում, այն կարելի է բնութագրել որպես իրականության կանոնավորման գործողություն, որի վերջնական արտահայտումը ստանում է խոսքի միջոցով, քանի որ խոսքը համարվում է կառավարելի և անգիտակցաբար պլանավորվող գործողություն, ռազմավարական գործընթաց, ուղղված որոշակի հաղորդակցման խնդրի հաջող լուծումն ապահովող խոսքային մարտավարական գործողությունների մշակմանն ու իրագործմանը:

Դատական խոսույթը՝ առավելապես պաշտպանական խոսքը, բանավեճային համոզիչ խոսք է: Դատապաշտպանը իր խոսքում ներկայացնում է իր ընթացակարգային տեսակետը, որը ծայրահեղ դեպքում առաջնահերթ ամբողջովին հակասում է դատավորի տեսակետին: Դատապաշտպանի խոսքը նպատակ է հետապնդում համոզելու լսարանին իր ճշմարտացիության մեջ:

Պաշտպանական խոսքի հիմնական հատկանիշներից է նպատակաուղղվածությունը: Դատապաշտպանը նպատակաուղղված կերպով ստեղծում է իր պաշտպանական խոսքն ազդելու լսարանի վրա և համոզելու նրան իր

դիրքորոշման ճշմարտացիության մեջ, իսկ լսարանի նպատակն է իր հերթին որոշել արդյոք ընդունում է նա խոսողի դիրքորոշումը , թե՛ ոչ: Խոսելու ընթացքում դատապաշտմանը ակնկալում է լսարանի խոսքի և կուլտուրայի իրավասության առկայությունը, և ըստ այդմ ստեղծում է իր և լսարանի կերպարը:

Պաշտպանական խոսքում առանձնակի ցայտունությամբ է դրսևորվում պաշտպանի անձի հոգեբանական առանձնահատկությունները, մասնավորապես, նրա խոսքի լեզվական կուլտուրան, բառապաշարի հնարավորին չափ լայն ու ճշգրիտ օգտագործումը, քերականական կանոնների պահպանումը, լեզվաճառական առանձնահատկությունների հետևողական կիրառումը: Խիստ էական է, որ խոսքը , և առաջին հերթին բանավորը, շփման գործընթացում լինի առավել արդյունավետ ու կուռ, նպատակասլաց ու ազդեցիկ, միտքն արտահայտի բովանդակալից ու հասկանալի, հենվի խոր, հասարակայնորեն արժեքավոր զգացմունքների վրա : Այլ կերպ ասած՝ խոսքին, տվյալ դեպքում՝ պաշտպանական, պետք է հատուկ լինի որոշակի կուլտուրա , այսինքն՝ խոսքը պետք է լինի՝ հակիրճ, բովանդակալից, դյուրմբռնելի, արտահայտիչ, ներգործուն /6/:

Պաշտպանի խոսքը բովանդակալից կլինի, եթե հաջորդվող փաստերից և տեղեկություններից բացի, նա նաև դրսևորի այդ ամենն ընդհանրացնելու հմտություն: Հմուտ պաշտպանը, ներկայացնելով մեղադրանքների հետ կապված իրադարձությունները և տալով դրանց իրավական գնահատականը, անդրադառնալով իր պաշտպանյալի անհատական – հոգեբանական առանձնահատկություններին և, մասնավորապես, կանգ առնելով ինչպես դրդապատճառային հարցերի , այնպես էլ հանցանքը ժխտող կամ մեղմացնող հանգամանքների վրա, կարող է այդ ամենն այնպես յուրահատուկ լուսաբանել , որ դրանք դառնան առավել նշանակալից :Նման ճառը , ոչ միայն բովանդակալից կարող է լինել , այլև՝ հազեցած խորը զգացմունքներով: Փորձառու դատապաշտպանին հատուկ է նաև խորամտությունը , որը պետք չէ շփոթել ‘ամենագետի’ մակերեսային տեղեկացվածության հետ /5/:

Դատողությունների մակերեսային մեկնաբանումը, հաջորդվող օրինաչափությունների աղոտությունը, փաստերի հավաստիության անբավարարությունը, ավելորդ ինքնավստահությունը , չափազանցնելու հակումը բացասաբար են անդրադառնում խոսքը բովանդակալից դարձնելուն: Մինչդեռ , խոսքի կառուցվածքի և շարադրման տրամաբանվածությունը նպաստում է մարդու գիտակցության մեջ արդարացնելու ասվածի հանդեպ այս կամ այն վերաբերմունքը: Հայտնի է, որ միևնույն երևույթը կարող է բնութագրվել տարբեր բառերով, միևնույն խոսքը՝ իմաստավորվել տարբեր առարկաներով ու երևույթներով: Դա բացատրվում է նրանով , որ առարկաները բազմակողմ են , իսկ բառերը՝ բազմանշանակ: Ավելի քիչ փորձ ունեցող դատապաշտպանները իրենց պաշտպանական խոսքում այդ իմաստով թույլ են տալիս սխալներ, երբ տեղին չեն օգտագործում բառերը /2:653/:

Պաշտպանը իր խոսքը բովանդակալից դարձնելու համար պետք է ամեն ինչ անի այն հասկանալի դարձնելու՝ թե դատարանի կազմին և թե դահլիճում ներկա գտնվողների համար: Շատ էական է , որ պաշտպանը տիրապետի տրամաբանության հիմունքներին և խոսքն արտասանելիս ճիշտ օգտագործի անհրաժեշտ իմաստային շեշտադրումները: Էական է նաև , թե ինչպես խոսքը կընկավի դատավարության մասնակիցների և դահլիճում ներկա գտնվողների կողմից: Տրամաբանական շեշտադրումների հետ է կապված նաև արտասանած ճիշտ երանգավորումը: Իր խոսքը արտասանելով դատապաշտպանը հստակ պետք է ձևակերպի այն . թե ինչ խնդիր է հետապնդում , ում է ուղղված իր խոսքը , ինչպիսին է իր վերաբերմունքը , պաշտպանյալի, դատավարության մասնակիցների և դահլիճում ներկաների նկատմամբ: Լինելով զուսպ և ունենալով խիստ հստակեցված պլան՝ դատապաշտպանի խոսքը պետք է լինի առավել արտահայտիչ: Խոսքը նաև պետք է պարունակի հուզական բովանդակություն , դատապաշտպանի խոսքի հնչունաբանական միջոցները պետք է լինեն բազմազան:

Անհրաժեշտ է, որ դատապաշտպանը տիրապետի պարզորոշ առոգանության , տվյալ լեզվի գրական արտասանության կանոններին: Դրա համար հարկավոր է ամեն կերպ ձեռքբազատվել առոգանության սխալներից /10/:

Պաշտպանական խոսքի միջոցով դատապաշտպանը հաղորդակցություն է հաստատում դատարանի հետ , և հանդիսանում տեղեկատվության աղբյուր: Մինչ այդ նա պետք է այնպես խորն ու բազմակողմանի ուսումնասիրի լուսաբանվող հարցերը, որպեսզի կարողանա նոր տեսաանկյունից մոտենալ առաջադիր խնդիրներին: Ընդ որում , ինչ նա հայտնում է, պետք է լինի ոչ միայն հստակ ու պարզորոշ, ինչպես նշվեց, այլև ոչ աղմկահարույց , իսկ ասելիքը չպետք է հայտնի ցածրաձայն և միապաղաղ: Այս ամենի հետ մեկտեղ , պաշտպանական խոսքը, նրա իմաստային և հուզականային բովանդակությունը համապատասխանաբար պետք է փոխանցվի անհրաժեշտ դիմախաղով ու արտահայտիչ շարժումներով, չափի զգացումով: Դատապաշտմանը պետք է մտահոգվի ոչ միայն այն մասին, որ իր խոսքը ընկալվի ու հասկացվի, այլև որ դահլիճում ներկաները , հատկապես դատավարության ընթացքում ոչ անմիջական մասնակիցները, դահլիճը թողնելուց հետո մտքեր փոխանակեն խոսքի շուրջ, կարծիքներ հայտնեն և , այդպիսով իրենց նպաստը բերեն առողջ հասարակական կարծիքի ձևավորման գործին /1/: Դատապաշտպանի տեղեկատվության ողջ գործընթացը կառուցվում է համաձայն հասցեատիրոջ ենթադրվող հակազդման , այս առումով , պաշտպանը նման է թատրոնի դերասանի : Կ.Ս. Ստանիսլավսկու արտահայտությամբ, եթե դերասանը չունենա ստեղծագործական իր գերխնդիրը և բեմ ելնի միայն իրեն ցուցադրելու համար, ապա այդ պարագայում իսկական դերասանը կմեռնի և բեմում կմնա միայն ինքնասիրահարված խրդվիլակը՝ անգոր բոցավառելու հանդիսատեսի սիրտը և արդարացվելու հանուն առավել լավ կյանքի: Յուրաքանչյուր պաշտպան սա պետք է իր համար գործունեության նպատակ դարձնի:

Դատապաշտպանի խոսքը, ինչպես արդեն ասվեց, պետք է լինի խստորեն հիմնավորված , համոզիչ և հենվի գործուն ապացույցների վրա: Պաշտպանն իր

գործունեության մեջ չի կարող ղեկավարվել Ֆրանսիայի փաստաբանների հայտնի ասացվածքով՝ ‘Մենք եկել ենք դատարան ոչ թե ինչ որ բան ապացուցելու , այլ միայն ցույց տալու համար , որ դատախազը ոչինչ չի ապացուցել’։ Նման դիրքը անխուսափելիորեն պաշտպանին մատնում է անգործության, պասիվության, նրա գործունեությունը սահմանափակելով միայն բացասական կողմով :

Պաշտպանությունն իրականացնելիս փաստաբանը չափազանց սկզբունքային ու անհաղթ պետք է լինի հոգեբանական հարկադրման՝ ապօրինի մեթոդների կիրառման նկատմամբ և միջոցներ ձեռնարկի քննչական ու դատական սխալները կանխելու համար:

Պաշտպանական խոսքը կրում է ինքնուրույն բնույթ և միտված է ամբաստանյալի օգտին որոշում կայացնելու գործին: Պաշտպանական խոսքի հիմքում միշտ պետք է ընկած լինի պաշտպանության հիմնական գաղափարը, թելը: Դրանից է կախված խոսքի բովանդակությունը և կառուցվածքը, ինչպես նաև հարաբերակցությունը /11/:

Այսպիսով, դատական խոսքը, առավելապես ` պաշտպանական խոսքը իր բոլոր բաղադրիչներով հանդերձ դատապաշտպանի գործունեության մեջ զբաղեցնում է ուրույն և չափազանց կարևոր տեղ, օգնում է դատարանին ճիշտ կողմնորոշվելու՝ ամբաստանյալին ներկայացված համաչափ պատժատեսակ սահմանելու գործում: Օգտվելով հոգեբանական գիտելիքներից՝ պաշտպանն ի գորու է ներկայացնել քննվող գործի փաստական տվյալները մարդկային վարքի կառավարման մեխանիզմին հիմնվելով՝ մի բան, որ հնարավոր չէ առանց մարդկանց ներաշխարհը, անհատական առանձնահատկություններն ու նպատակները, հուզական վիճակն ու ապրումները լրիվ հասկանալու :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Алексеев Н.С., Макарова З.В. Ораторское искусство в суде. – Л.: Изд-во ЛГУ.
2. Виноградов В.В. О языке художественной литературы. – М.: Художественная литература, 1959. – 653 с.
3. Владимиров Л.Е. Суд присяжных. – Харьков: Университетская типография, 1873. – 257 с.
4. Кони А.Ф. Искусство речи на суде // П. Сергеич Искусство речи на суде. – Тула: Автограф, 1999. – 320 с.
5. Кузнецова Е.А. Экспрессивность ораторской маски в судебной защитительной речи // Человек – коммуникация – текст. Вып. 5. - Барнаул: Изд-во: АГУ. 2002.
6. Кузнецова Е.А. К проблеме образа человека в судебной речи (на материале речей Ф.Н. Плевако) // Язык. Время. Личность. Материалы Международной научной конференции. - Омск: Изд-во Омск. гос. ун-т,
7. Лейчик В. М. Терминоведение: предмет, методы, структура, 2006- с. 210
8. Сергеич П. Искусство речи на суде. – Тула: Автограф, 1999. – с. 320
9. Garner B. The Elements of Legal Style , 2002. – p.1
10. <http://criminal.findlaw.com/criminal-legal-help/criminal-defense-strategies.html>
11. <http://www.csa.com/discoveryguides/linglaw/overview.php>